ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար կենցաղային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/30» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«07» օգոստոսի 2018թ.
Ժամը՝ 11:00

ք. Երևան

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Հովհաննես Ստեփանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. օգոստոսի 9-ին ժամը՝ 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

-մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. օգոստոսի 8-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ավագյան (ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Ստեփանյան (ստորագրություն)

Կ. Մելքոնյան (ստորագրություն)

Ա. Ալիխանյան (ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Օ. Ասատրյան (ստորագրություն)